«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-2021/15-3-ԵՊԲՀ-2

ք. Երևան «___» _____ 20 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՌՈՄԱ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ռ. Խոջաբաղյանի, որը գործում է «ՌՈՄԱ» ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 52812050 (հիսուն երկու միլիոն ութ հարյուր տասներկու հազար հիսուն)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Մատակարարման գինը նաև ներառում է Պատվիրատուի կողմից կատարվելիք մաքսազերծման և ներմուծման բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը և տուրքերը այդպիսիք լինելու դեպքում, և տվյալ դեպքում նշված վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը և տուրքերը ենթակա են փոխհատուցման Վաճառողի կողմից Պատվիրատուին՝ Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ հաշվառկման և հաշվանցման ճանապարհով:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

1. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

2. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Միհիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«ՌՈՄԱ»ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ Ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Արարատբանկ»ԲԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 1510003864590100
հ/հ 11500166513800	ՀՎՀՀ 00045967
ՀՎՀՀ 01503448	
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	Տնօրեն՝ Ռ. Խոջաբաղյան
_____	Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
(ստորագրությունը)	_____
Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.04.15 12:03:56 AMST

Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2021.04.15 13:15:24 AMT

Հավելված N 1
« » « » 2021թ. կնքված
« ԳՀԱՊՁԲ-2021/15-3-ԵՊԲՀ-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
29	33691162	Նոսրացնող լուծույթ ABX DILUENT HORIBA ABX SAS	ABX DILUENT HORIBA ABX SAS	Նոսրացնող լուծույթ ABX DILUENT, նախատեսված HORIBA Yumizen H500, H550 ավտոմատ հեմատոլոգիական վերլուծիչների համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 20լ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան: Ֆիրմային նշանի և նույնականացման գծիկավոր կոդի առկայությունը փաթեթի վրա: Հանձնելու պահին պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-դրի առկայություն: For In Vitro Diagnostic only: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր առկայություն:	հատ	49000	2205000	45	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	45	
33	33691162	Լիզ լուծույթ WHITEDIFF	WHITEDIFF HORIBA ABX SAS	Լիզ լուծույթ WHITEDIFF, նախատեսված HORIBA Yumizen H500, H550 ավտոմատ հեմատոլոգիական վերլուծիչների համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1լ լիզ. լուծույթ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան: Ֆիրմային նշանի և նույնականացման գծիկավոր կոդի առկայություն փաթեթի վրա: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի առնվազն 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար	հատ	84000	5880000	70	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	70	

				որակի սերտիֆիկատի/ների պարտադիր առկայություն:							
34	33691159	Սիֆիլիսի որոշման թեստ (RPR carbon, Syphilis)	CYPRESS DIAGNOSTICS Cypress Diagnostics	Սիֆիլիսի որոշման թեստ (RPR carbon, Syphilis): Մեթոդ՝ ֆլոկուլյացիա, սկրինինգի համար: Ֆորմատ 1 թեստ-հետազոտություն/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա/: Փաթեթավորումը՝ թեստ-հավաքածու: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	52	351000	6750	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	6750	
36	33691159	Բրուցելյոզի որոշման թեստ Brucellose /Rose Bengal/	CYPRESS DIAGNOSTICS Cypress Diagnostics	Բրուցելյոզի որոշման թեստ Brucellose /Rose Bengal/: Մեթոդ՝ ագլյուտինացիա, սկրինինգի համար: Ֆորմատ՝ 1 թեստ-հետազոտություն/հատ: Փաթեթավորումը՝ թեստ-հավաքածու: Հավաքածուն ներառում է դրական և բացասական հսկողության թեստերը, միանվագ օգտագործվող պլաստմասե խառնիչները և abortus,melitensis,suis Brucella սպեցիֆիկ ագլյուտինացիա: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի առնվազն 1/2 առկայություն:	հատ	396	594000	1500	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1500	
37	33691156	Դոնորական արյան պահպանման պարկ եռկոմպոնենտ	RAVIMED “RAVIMED” Sp.z.o.o.	Դոնորական արյան պահպանման պարկ եռկոմպոնենտ, ստերիլ, ոչ տոքսիկ, միանգամյա օգտագործման: Արյան պահպանման ժամկետը տոպրակի մեջ՝ ոչ պակաս քան 35 օր: Թրոմբոցիտները առնվազն 5 օր պահպանելու հնարավորությամբ: Պարունակությունը՝ CPDA-1 հակակոագուլյանտ: Ծավալ՝ 450մլ/300/300մլ: Պարտադիր պայման է համարվում վակուումային փորձանոթին միացվող կցորդիչի և հետազոտության համար արյուն հավաքող հավելյալ պարկի առկայությունը: Փաթեթավորում՝ յուրաքանչյուրն առանձին փաթեթավորված: Ֆորմատ՝ հատ: Գծիկավոր կոդով պարկի նույնականացման հնարավորությամբ: Պահպանման պայմանները՝ +10...30° C: ISO9001, ISO13485, CE որակի սերտիֆիկատների առկայություն: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն	հատ	2280	2280000	1000	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	1000	

				1/2-ի առկայություն:							
38	33691159	Maglumi ՄԻԱՎ 1 և 2-ի նկատմամբ հակամարմինների որակական որոշման թեստ-հավաքածու	MAGLUMI HIV Ab/Ag Combi Snibe Diagnostic	Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Maglumi ՄԻԱՎ 1 և 2-ի նկատմամբ հակամարմինների որակական որոշման թեստ-հավաքածու (MaglumiHIV1&2 Ab): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	128800	9660000	75	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	75	
39	33691162	Maglumi աշխատանքային փորձանոթ reaction module	MAGLUMI Reaction Modules Snibe Diagnostic	Maglumi աշխատանքային փորձանոթ (reaction module) նախատեսված Maglumi 600 և 800 վերլուծիչներով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 6x64 կյուվետ տուփում/հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Պահպանման պայմանները՝ 15-30°C :	հատ	22700	6810000	300	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	300	
40	33691162	Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2	MAGLUMI Starter 1+2 Snibe Diagnostic	Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2, նախատեսված Maglumi 600 և 800 վերլուծիչներով աշխատելու համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 2x230մլ տուփում/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 15-30°C: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only:	հատ	66500	5985000	90	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	90	
41	33691159	Maglumi Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ հավաքածու	MAGLUMI ANTI-HCV Snibe Diagnostic	Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Maglumi Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների քանակական հայտնաբերման թեստ հավաքածու (Maglumi HCV): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	96400	9254400	96	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	96	

42	33691162	Maglumi Հեպատիտ B HBsAg հակածնի հայտնաբերման թեստ հավաքածու	Maglumi HBsAg Snibe Diagnostic	Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Maglumi Հեպատիտ B հակածնի քանակական հայտնաբերման թեստ հավաքածու (MaglumiHBsAg): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	68700	6251700	91	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	91	
50	33141211	Ավտոմատ բաժանավորիչի ծայրակալ 0-200 մկլ	TRUST LAB Ningbo TRUST LAB Instruments Co.,Ltd	Ավտոմատ բաժանավորիչ ծայրակալ 0-200 մկլ: Ֆորմատ՝ 1 հատ ծայրակալ: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի առնվազն ½-ի առկայություն: Պահպանման պայմանները 15-25 °C:	հատ	1.27	120650	95000	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	95000	
74	33691162	Մաքրող լուծույթ ABX CLEANER	ABX CLEANER HORIBA ABX SAS	Մաքրող լուծույթ ABX CLEANER, նախատեսված HORIBA Yumizen H500, H550 ավտոմատ հեմատոլոգիական վերլուծիչների համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1լ մաքրող լուծույթ/հատ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան: Ֆիրմային նշանի և նույնականացման գծիկավոր կոդի առկայությունը փաթեթի վրա: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի առնվազն 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատների պարտադիր առկայություն:	հատ	48000	1440000	30	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	30	
75	33691162	Maglumi Ընդհանուր ՊՍԱ, PSA total որոշման թեստ հավաքածու	Maglumi Total PSA Snibe Diagnostic	Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված, Maglumi ընդհանուր ՊՍԱ որոշման թեստ հավաքածու (Maglumi PSA total): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only:	հատ	99700	299100	3	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	3	

98	33691162	Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ հավաքածու	Maglumi TSH Snibe Diagnostic	Maglumi 600 և Maglumi 800 վերլուծիչների համար նախատեսված Maglumi թիրեոտրոպ հորմոնի հայտնաբերման թեստ հավաքածու (Maglumi TSH): Օրիգինալ: Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինեսցենտային: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում, կալիբրատոր, կոնտրոլ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Պահպանման պայմանները՝ 2-8°C : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only:	հատ	46700	1681200	36	ք.Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	36	

*

1) Ապրանքը նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:
2) Ապրանքը թուրքական արտադրության չէ:
3) Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:
*** Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.04.15 12:04:13 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«ՌՈՄԱ»ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Բանկ՝ «Արարատբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1510003864590100
ՀՎՀՀ 00045967

Տնօրեն՝ Ռ. Խոջաբագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2021.04.13 13:14:16 AMT

Հավելված N 2
« » « » 2021թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2021/15-3-ԵՊԲՀ-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
29	33691162	Նոսրացնող լուծույթ ABX DILUENT HORIBA ABX SAS	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
33	33691162	Լիզ լուծույթ WHITEDIFF	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
34	33691159	Սիֆիլիսի որոշման թեստ (RPR carbon, Syphilis)	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
36	33691159	Բրուցելյոզի որոշման թեստ Brucellose /Rose Bengal/	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
37	33691156	Դոնորական արյան պահպանման պարկ եռկոմպոնենտ	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
38	33691159	Maglumi ՄԻԱՎ 1 և 2-ի նկատմամբ հակամարմինների որակական որոշման թեստ-հավաքածու	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
39	33691162	Maglumi աշխատանքային փորձանոթ reaction module	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
40	33691162	Maglumi աշխատանքային լուծույթ Starter 1+2	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
41	33691159	Maglumi Հեպատիտ C վիրուսի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ հավաքածու	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

42	33691162	Maglumi Հեպատիտ B HBsAg հակածնի հայտնաբերման թեստ հավաքածու	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
50	33141211	Ավտոմատ բաժանավորիչի ծայրակալ 0-200 մկլ	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
74	33691162	Մաքրող լուծույթ ABX CLEANER	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
75	33691162	Maglumi Ընդհանուր ՊՍԱ, PSA total որոշման թեստ հավաքածու	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
98	33691162	Maglumi Թիրեոտրոպ հորմոնի որոշման թեստ հավաքածու	–	–	–	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով՝ ըստ մատակարարված ապրանքների քանակի:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Միխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.04.15 12:04:28 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«ՌՈՄԱ»ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9/5
Բանկ՝ «Արարատբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1510003864590100
ՀՎՀՀ 00045967

Տնօրեն՝ Ռ. Խոջաբաղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by KHOJABAGYAN
ROMAN 1402800134
Date: 2021.04.13 13:13:25 AMT

Հավելված N 3
« » « » 2021թ. կնքված
« » ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2021թ. կնքված
« » ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն